ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
12 ՀՈՒԼԻՍԻ 2022թվականի N 429-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն որոշումը, ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման 4-րդ բաժնի 33-րդ, 34-րդ, 34.2-րդ 35-րդ և 35.1 կետերով, հաշվի առնելով, որ Նոյեմբերյան համայնքի սեփականությունը հանդիսացող Այրում քաղաքի Գործարարների փողոց թիվ 23 պահեստ հասցեում գտնվող 0.01035 հա մակերեսով՝ հողամասում առկա ինքնակամ կառույցը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, նկատի ունենալով, որ այն կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի կազմում, ինժեներա-տրանսպորտային օբյեկտների օտարման ու անվտանգության գոտիներում և քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և հաշվի առնելով Մխիթար Կամոյի Անտոնյանի 18.04.2022 թվականի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Օրինականացնել Նոյեմբերյան համայնքի Այրում քաղաքի վարչական տարածքում գտնվող Գործարարների փողոց թիվ 23 պահեստ հասցեում Մխիթար Կամոյի Անտոնյանի կողմից ինքնակամ կառուցված 41.5 քմ արտաքին մակերեսով կառույցը (պահեստ):
2. Նոյեմբերյան համայնքի Այրում քաղաքի վարչական տարածքում գտնվող Գործարարների փողոց թիվ 23 պահեստ հասցեում Մխիթար Կամոյի Անտոնյանի ինքնակամ կառուցված 41.5 քմ արտաքին մակերեսով կառույցի (պահեստ) նկատմամբ ճանաչել Նոյեմբերյան համայնքի սեփականության իրավունքը (սպասարկման համար նախատեսված է 0.01035 հա, նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների):

3. Հանձնարարել Նոյեմբերյանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ Նարեկ Դանիելյանին սույն որոշմամբ օրինականացված կառույցի (ավտոտնակ) նկատմանբ իրավունքի պետական գրանցումը կատարելուց հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկությամբ դիմել ինքնակամ կառույցն իրականացրած անձին՝ Մխիթար Կամոյի Անտոնյանին՝ գնման նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքի միջոցով կառույցն 100350 ՀՀ դրամ արժեքով /41.5x2418/ և նրա սպասարկման համար անհրաժեշտ 103.5 քմ հողամասը՝ 126380 ՀՀ դրամ արժեքով (103.5 x 1221) ձեռք բերելու համար:
4. Տրամադրվող հողամասի մակերեսը և սահմանները ընդունվում են սույն որոշմանը կից ներկայացված հողամասի հատակագծի մակերեսով և սահմաններով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԱՂԱԲԱԲՅԱՆ

2022 թ. հուլիսի 12
ք.Նոյեմբերյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
12 ՀՈՒԼԻՍԻ 2022 թվականի N 430-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն որոշումը, ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման 4-րդ բաժնի 33-րդ, 34-րդ, 34.2-րդ 35-րդ և 35.1 կետերով, հաշվի առնելով, որ Նոյեմբերյան համայնքի սեփականությունը հանդիսացող Այրում քաղաքի Գործարարների փողոց թիվ 25 անասնաշենք հասցեում գտնվող 0.01418 հա մակերեսով՝ հողամասում առկա ինքնակամ կառույցը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, նկատի ունենալով, որ այն կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի կազմում, ինժեներա-տրանսպորտային օբյեկտների օտարման ու անվտանգության գոտիներում և քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և հաշվի առնելով Մխիթար Կամոյի Անտոնյանի 18.04.2022 թվականի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Օրինականացնել Նոյեմբերյան համայնքի Այրում քաղաքի վարչական տարածքում գտնվող Գործարարների փողոց թիվ 25 անասնաշենք հասցեում Մխիթար Կամոյի Անտոնյանի կողմից ինքնակամ կառուցված 44.46 քմ արտաքին մակերեսով կառույցը (անասնաշենք):
2. Նոյեմբերյան համայնքի Այրում քաղաքի վարչական տարածքում գտնվող Գործարարների փողոց թիվ 25 անասնաշենք հասցեում Մխիթար Կամոյի Անտոնյանի ինքնակամ կառուցված 44.46 քմ արտաքին մակերեսով կառույցի (անասնաշենք) նկատմամբ ճանաչել Նոյեմբերյան համայնքի սեփականության իրավունքը (սպասարկման համար նախատեսված է 0.01418 հա նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության,ընդերքօգտագործմանև այլ արտադրական, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների):

3. Հանձնարարել Նոյեմբերյանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ Նարեկ Դանիելյանին սույն որոշմամբ օրինականացված կառույցի (ավտոտնակ) նկատմանբ իրավունքի պետական գրանցումը կատարելուց հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկությամբ դիմել ինքնակամ կառույցն իրականացրած անձին՝ Մխիթար Կամոյի Անտոնյանին ՝ գնման նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքի միջոցով կառույցն 107510 ՀՀ դրամ արժեքով /44.46x2418/ և նրա սպասարկման համար անհրաժեշտ 141.8 քմ հողամասը՝ 193670 ՀՀ դրամ արժեքով (44.46x3x1221+(141,8-133,38)x1221) ձեռք բերելու համար:
4. Տրամադրվող հողամասի մակերեսը և սահմանները ընդունվում են սույն որոշմանը կից ներկայացված հողամասի հատակագծի մակերեսով և սահմաններով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԱՂԱԲԱԲՅԱՆ

2022 թ. հուլիսի 12
ք.Նոյեմբերյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
12 ՀՈՒԼԻՍԻ 2022 թվականի N 431-Ա

ՀՈՂԱԲԱԺՆԻ ՄԻՉԵՎ 20 ՏՈԿՈՍ ԱՎԵԼԻ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԱՏՎԱԾԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետով, հաշվի առնելով քաղաքացի Թամարա Վազգենի Մելքոնյանի, Սերգեյ Սարգիսի Անտոնյանի, Հերմինե Սարգիսի Անտոնյանի,Կարեն Սարգիսի Անտոնյանի դիմումը և հաշվի առնելով, որ հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի ցանկում՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Թամարա Վազգենի Մելքենյանին,Սերգեյի Սարգիսի Անտոնյանին,Հերմինե Սարգիսի Անտոնյանին,Կարեն Սարգիսի Անտոնյանին ժառանգության իրավունքով պատկանող անշարժ գույքի ավել օգտագործվող 0.13 հա մակերեսով հողամասի (ամբողջը՝ 0.14908 հա, ծածկագիր՝ 11-004-0158-0022, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, հողատեսքը՝ բնակելի կառուցապտման) նկատմամբ ճանաչել Թամարա Վազգենի Մելքոնյանի, (ծնված 05.01.1964 թվականին)Սերգեյ Սարգիսի Անտոնյանի,(ծնված 10.12.1984 թվականին)Հերմինե Սարգիսի Անտոնյանի,(ծնված 16.11.1986 թվականին)Կարեն Սարգիսի Անտոնյանի(ծված 06.10.1988 թվականին) սեփականության իրավունքը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԱՂԱԲԱԲՅԱՆ

2022 թ. հուլիսի 12
ք.Նոյեմբերյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
14 ՀՈՒԼԻՍԻ 2022 թվականի N 432-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի ըստ դրա գտնվելու և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Նոյեմբերյան համայնքի Հաղթանակ բնակավայրի 11-043-0020-0024 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տալ հասցե՝ գրանցելով. համայնք Նոյեմբերյան գյուղ Հաղթանակ, 1-ին փողոց, 9 շենք, 6 բնակարան, փոստային դասիչ 4111:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԱՂԱԲԱԲՅԱՆ

2022 թ. հուլիսի 14
ք.Նոյեմբերյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
15 ՀՈՒԼԻՍԻ 2022 թվականի N 433-Ա

11-012-0130-0117 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԸՆԴԼԱՅՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 8-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով և հիմք ընդունելով 13 հուլիսի 2022 թվականի Նոյեմբերյան համայնքի ավագանու թիվ 114-Ա որոշումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Նոյեմբերյան համայնքի Այրում քաղաքում գտնվող 11-012-0130-0117 կադաստրային ծածկագրով 195.8 քմ գյուղատնեսական նշանակության կորիզավոր հողամասը ուղղակի վաճառքով օտարել Սաշա Շուրայի Ղազարյանին և Շուրա Բախշոյի Ղազարյանին՝ նրանց սեփականության իրավունքով պատկանող՝ 11-012-0130-0084 կադաստրային ծածկագրով գյուղատնեսական նշանակության կորիզավոր հողամասի ընդլայնման նպատակով կադաստրային արժեքին համապատասխան (մեկ քառակուսի մետրը 329 դրամ) 64420 (վաթսունչորս հազար չորս հարյուր քսան) դրամ (329 X 195.8) արժեքով, որը պետք է վճարվի Նոյեմբերյան համայնքի 900395119127 գանձապետական հաշվին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՍՂԱԲԱԲՅԱՆ

2022 թ. հուլիսի 15
ք.Նոյեմբերյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
18 ՀՈՒԼԻՍԻ 2022 թվականի N 434-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. 2022 թվականի օգոստոսի 23-ին հայտարարել Նոյեմբերյանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության կրտսեր պաշտոնների *3.1-23, 3.1-27, 3.2-21, 3.2-22, 3.2-23, 3.2-24, 3.2-26, 3.2-28, 3.2-29, 3.2-30 ծածկագրերով* թափուր պաշտոնների մրցույթ:
2. Աշխատակազմի քարտուղարին՝ մրցույթի մասին հայտարարությունը տեղադրել Նոյեմբերյանի համայնքապետարանի պաշտոնական կայքում, ինչպես նաև https://www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում:
3. Մրցույթի կայացման սկիզբը հայտարարել 2022 թվականի օգոստոսի 23-ի ժամը 11:00-ն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԱՂԱԲԱԲՅԱՆ

2022 թ. հուլիսի 18
ք.Նոյեմբերյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
18 ՀՈՒԼԻՍԻ 2022 թվականի N 435-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի ըստ դրա գտնվելու և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Նոյեմբերյան համայնքի Արճիս բնակավայրի վարչական տարածքում գտնվող <<ՍԱԼԷՆԵՐԳՈ>> ՍՊԸ-ին պատկանող անշարժ գույքից առանձնացվող՝ 11-015-0201-0007 կադաստրային ծածկագրով 0,003598 հա հողամասին տալ հասցե՝ գրանցելով. համայնք Նոյեմբերյան գյուղ Արճիս, 24-րդ փողոց թիվ 3/1 հողամաս հասցեն , իսկ վկայականում առկա մնացած ՝ հողամասին և շինություններին տալ մասին տալ հասցե՝ գրանցելով. համայնք Նոյեմբերյան գյուղ Արճիս, 24-րդ փողոց թիվ 3 տարածք դասիչ 4103:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԱՂԱԲԱԲՅԱՆ

2022 թ. հուլիսի 18
ք.Նոյեմբերյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
18 ՀՈՒԼԻՍԻ 2022 թվականի N 436-Ա

ՕՐԻՆԱԿԱՆԱՑՎԱԾ ԿԱՌՈՒՅՑՆ ԻՐ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՏԱՐԱԾՔՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանարապետոյթյան քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով, <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության 18 մայիսի 2006 թվականի թիվ 912-Ն որոշման 4-րդ բաժնի 33.1-րդ, 35-րդ, 35.1-րդ կետերով, հիմք ընդունելով, որ կառույցը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, նկատի ունենալով, որ այն կառուցված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման ու անվտանգության գոտիներում և քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև հաշվի առնելով Նոյեմբերյան համայնքի Այրում քաղաքի բնակիչ, կառույցն իրականացրած Ռոմեո Ռաֆիկի Ղուլիջանյանի (նույնականացման քարտ 008397267, տրված 04.07.2016թ. 047-ի կողմից) 30.06.2022 թվականի համաձայնությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Նոյեմբերյան համայնքի սեփականությունը հանդիսացող քաղաք Այրում Հ.Թումանյան փողոց թիվ 39 ավտոտնակ հասցեում գտնվող 0.0047 հա մակերեսով հողամասում (ծածկագիր՝ 11-012-0102-0091, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) առկա օրինականացված և համայնքային սեփականություն ճանաչված 47 քմ արտաքին մակերեսով կառույցը և կառույցի սպասարկման ու պահպանության համար նախատեսված 0.0047 հա մակերեսով հողամասը գնման նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքի կարգով օտարել կառույցն իրականացրած Ռոմեո Ռաֆիկի Ղուլիջանյանի:

2. Ռոմեո Ռաֆիկի ՂուլիջանյանըՆոյեմբերյանի համայնքապետարանի բյուջե պետք է վճարի՝

56830 /47x1209/ ՀՀ դրամը 900395119135 հաշվին, որպես կառույցի օտարման գին

57390/47x 1221/ ՀՀ դրամ 900395119127 հաշվին (կադաստրային արժեք), որպես հողամասի օտարման գին:

3. Վճարելուց հետո օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել անշարժ գույքի օտարման պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԱՂԱԲԱԲՅԱՆ

2022 թ. հուլիսի 18
ք.Նոյեմբերյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
18 ՀՈՒԼԻՍԻ 2022 թվականի N 437-Ա

ՀՈՂԱՄԱՍ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով և «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 4-րդ հոդվածով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Համայնքային սեփականություն հանդիսացող 11-012-0131-0050 կադաստրային ծածկագրով հողամասից 0,01418 հա մակերեսով հողատարածք առանձնացնել և առանձնացված հողամասի նկատմամբ, որպես առանձին գույքային միավոր, պետական գրանցման ներկայացնելու նպատակով դիմել ՀՀ կադաստրի կոմիտե:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԱՂԱԲԱԲՅԱՆ

2022 թ. հուլիսի 18
ք.Նոյեմբերյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
18 ՀՈՒԼԻՍԻ 2022 թվականի N 438-Ա

ՀՈՂԱՄԱՍ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով և «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 4-րդ հոդվածով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Համայնքային սեփականություն հանդիսացող 11-012-0131-0035 կադաստրային ծածկագրով հողամասից 0.01035 հա մակերեսով հողատարածք առանձնացնել և առանձնացված հողամասի նկատմամբ, որպես առանձին գույքային միավոր, պետական գրանցման ներկայացնելու նպատակով դիմել ՀՀ կադաստրի կոմիտե:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԱՂԱԲԱԲՅԱՆ

2022 թ. հուլիսի 18
ք.Նոյեմբերյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք, Երևանյան 4
/0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
18 ՀՈՒԼԻՍԻ 2022թվականի N 439-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 19. 03. 2015 թվականի թիվ 596-Ն որոշումով և հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Կառուցապատող «ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» Համայնքային կառավարչական հիմնարկին տալ շինարարության թույլտվություն՝ ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի Կողբ գյուղի մշակույթի տան տանիքի հիմնանորոգման շինարարական աշխատանքների համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԱՂԱԲԱԲՅԱՆ

2022 թ. հուլիսի 18
ք.Նոյեմբերյան